



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ ՈՐ**

26 նոյեմբերի 2021 թ.

**Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի նախագահ  
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Սիսակ Գաբրիելյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Սիսակ Գաբրիելյան (031)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Տարրական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից, առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: »:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  
կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

«Կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ սկզբունքով՝ պետությունը պետք է դասագրքերով ապահովի բոլոր տարրական դասարանների աշակերտներին հավասար հիմունքներով, անկախ նրանից, հաճախում են իրենք պետական թե ոչ պետական հանրակրթական դպրոց:

### Ներկա իրավիճակը

«Կրթության մասին» օրենքը<sup>1</sup> սահմանում է, որ «Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով<sup>2</sup>»:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների<sup>3</sup> 2020/2021 թ. ուսումնական տարում Հայաստանում գործում էր 1 402 հանրակրթական դպրոց, որոնցից 1 354-ը պետական են, 48-ը՝ ոչ պետական: Հանրակրթական դպրոցներում 1-4 (տարրական) դասարանների քանակը կազմում է՝ 8 051, որից 7 724-ը պետական դպրոցների դասարաններն են, 327-ը՝ ոչ պետական: Հանրակրթական դպրոցների 1-4 (տարրական) դասարանների աշակերտների թվաքանակն 155 673-ն է, որից 151 655-ը սովորում է պետական դպրոցներում, իսկ 4018-ը՝ ոչ պետական:

<sup>1</sup> «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը

<sup>2</sup> 2021-2022 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի ցանկը՝ <https://escs.am/files/files/2021-03-16/9cb218e45afdc03766c20b56359e64a7.pdf>; դասագրքերը նախատեսված են հետևյալ առարկաների համար՝ <https://escs.am/files/files/2021-09-02/f610b1e216a229cb42331526f0d52ecf.pdf>

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2021), **Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-մարտին, Սոցիալ-Ժողովրդագրական հատված**, էջ. 208-221, հասանելի է՝ [https://armstat.am/file/article/sv\\_03\\_21a\\_5130.pdf](https://armstat.am/file/article/sv_03_21a_5130.pdf) հղումով:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները ստանում են համապատասխան դասագրքերը համաձայն ներկայում գործող «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի»<sup>4</sup>: Կարգում ներկայացված է հանրակրթական առարկաների դասագրքերի և նրանց համապատասխան ուսուցչի ձեռնարկների հրատարակման ու բաշխման գործընթացը՝ դպրոցների համապատասխան քայլերն ու գործողությունները դասագրքերի ձեռքբերման ընթացքում, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գործողությունները, որպես գործընթացը համակարգող և վերահսկող մարմին:

Ամեն տարի համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանի,<sup>5</sup> որով հաստատվում է կրթական հաստատությունների աշակերտների համար դասագրքերի և ուսումնական գրականության ձեռքբերման ցանկը<sup>6</sup> միջինում ձեռք է բերվում քանակով մոտ 767,715.6 հատ դասագիրք և ուսումնական գրականություն, որի տարեկան միջին գինն է 906,573,541.2 ՀՀ դրամ<sup>7</sup>:

Ոչ պետական դպրոցները իրենց դասագրքային ֆոնդը կարող են ձեռք բերել վճարովի սկզբունքով հրատարակչություններից: Այնուամենայնիվ, բավականին երկար ժամանակ

---

<sup>4</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշիչն դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» N 752-Ն հրամանը: Ներկա պահին շրջանառվում է նաև նոր կարգի նախագիծը, որը հասանելի է սույն հղումով՝ <https://www.e-draft.am/projects/3488/about>

<sup>5</sup> ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 16-ի ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բյուջետային ծախսերի «Հանրակրթության ծրագրի /1146 դասի/ «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» 11016 միջոցառման շրջանակներում դասագրքերի ձեռքբերման ցանկը հաստատելու մասին» N 396 - Ա/2 հրամանը, հասանելի է՝ <https://escs.am/files/files/2021-03-23/440f9da50dbf46a9cd6232d16d7bd6da.PDF> հղումով:

<sup>6</sup> ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 5-ի N 481-Ա/2 հրաման, հասանելի է՝ <https://escs.am/files/files/2021-04-15/3ed33c944064106da411ba84c988a556.pdf> հղումով:

<sup>7</sup> Հաշվարկված է հաշվի առնելով սույն փաստաթղթի հղումների բաժնի վեցերորդ կետում նշված հրամանի և դրան հաջորդող սույն հրամանի 2020, 2019, 2018 թթ. տվյալները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի N 496-Ն որոշման Հավելված N 1-ի տվյալները:

ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը շարունակում է ստանալ բողոքներ ոչ պետական դպրոցների ներկայացուցիչներից համապատասխան դասագրքերի ձեռքբերման ընթացքում ծագող խնդիրների վերաբերյալ հավասարության և թափանցիկության բացակայության առումով: Այդ դպրոցների ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների կարծիքով՝ դասագրքերի ձեռքբերման գործընթացը իրականացվում է առանց գեղչային պայմանների կամ գնային արտոնությունների, ինչը դրդում է որոշ դպրոցներին ձեռք բերել այդ դասագրքերը երկրորդային շուկայից, ինչը իր հերթին խթանում է ստվերային շուկայի զարգացումը:

Համաձայն օրենքի<sup>8</sup> դասագրքերը տրամադրվում են ոչ թե դպրոցներին, այլ աշակերտներին դպրոցների միջոցով: Եվ պետական և ոչ պետական դպրոցները կրթական գործընթացն իրականացնում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչների, ուստի, տարբեր կազմակերպական-իրավական ձև ունեցող դպրոցներ հաճախող աշակերտների իրավունքները չպետք է տարբերվեն: Հետևաբար, դասագրքերի տրամադրման գործընթացը չպետք է պարունակի տարբերակում՝ օրենքը պետք է վերաբերի ՀՀ բոլոր սովորողներին՝ անկախ իրենց ուսումնական հաստատության կազմակերպատիրավական ձևից, ապահովելով երեխաների կրթության իրավունքը: ՀՀ ոչ պետական դպրոցներում սովորող աշակերտները ևս ՀՀ Սահմանադրությամբ օժտված են կրթության իրավունքով:<sup>9</sup> Հետևաբար դասագրքերի տրամադրման հարցում պետական քաղաքականությունը պետք է լինի համընդհանուր, բացառելով խտրականությունը:

## **Առաջարկություններ**

<sup>8</sup> «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը

<sup>9</sup> ՀՀ սահմանադրություն, Հոդվ. 38, Կրթության իրավունքը, կետ 1, 22.12.2015

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է «Կրթության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Տարրական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների, անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից, առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:»:

### **Ակնկալվող արդյունքը**

- Պետությունը ապահովում է ՀՀ բոլոր աշակերտների կրթության իրավունքը՝ անկախ իրենց կողմից հաճախած հանրակրթական ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից:
- Դադարում է երկրորդային շուկայից դասագրքերի ձեռքբերման գործընթացը, նվազում են կոռուպցիոն ռիսկերը:

## **Տեղեկանք**

### **«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ**

#### **Հոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները**

1. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով:

2. Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:

2.1. Պետությունը, համագործակցելով սոցիալական գործընկերների հետ, ապահովում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, ինչպես նաև երաշխավորում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգի համաչափ գործարկումն ու արդյունքների ճանաչումը:

3. Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների

կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ:

Արգելվում է ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ: Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

Նպատակային ուսուցմամբ ուսանող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաև հետևյալ պայմանը. ուսանողն ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի



չափի հանրագումարի կրկնապատիկը: Փոխհատուցված գումարի 70 տոկոսը բարձրագույն ուսումնական հաստատությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 30 տոկոսը տնօրինում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Տարրական հանրակրթական ծրագրերը իրականացնող ուսումնական հաստատությունների, անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից, ~~Պետական հանրակրթական դպրոցների~~ առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

5. Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

7. Պետությունը նպաստում է, որ կրթական գործունեությանը մասնակցի նաև սփյուռքահայությունը:

(6-րդ հոդվածը փոփ. 20.11.00 ՀՕ-107, լրաց. 11.12.02 ՀՕ-471-Ն, խմբ. 25.05.05 ՀՕ-137-Ն, փոփ. 08.07.05 ՀՕ-165-Ն, լրաց. 23.06.10 ՀՕ-111-Ն, 07.10.09 ՀՕ-188-Ն, 28.10.10 ՀՕ-153-Ն, 08.02.11 ՀՕ-50-Ն, փոփ. 30.04.13 ՀՕ-37-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-83-Ն, խմբ. 01.12.14 ՀՕ-201-Ն, 03.02.16 ՀՕ-27-Ն)